

Արևելյան գործընկերության Եվրոպական դպրոցի **2019-2020 թթ..**

թվականների միջնակարգ
կրթության կրթաթոշակային
ծրագիր

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԴԻՊԼՈՄ (IB)

ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ, ԹԲԻԼԻՍԻԻ
«ՆՈՐ ԴՊՐՈՑ»-ՈՒՄ (ՎՐԱՍԱՆ)

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ`

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ, ԲԵԼԱՌՈՒՍԻ, ՎՐԱՍԱՆԻ,
ՄՈՆԴՈՎԱՅԻ և ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆ Է`

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ը, ՎՐԱՍԱՆԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ
ԺԱՍԸ 12:00, (ԿԵՍՕՐ, UTC + 4.00)



Supported by
the European Union



implementing partner



Ո՞րն է Արևելյան գործընկերության Եվրոպական դպրոցի կրթաթոշակային ծրագրի նպատակը:

Առաջարկելով բարձր որակի միջազգային ճանաչում ունեցող դիպլոմ՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող այս կրթաթոշակային ծրագիրը հատուկ կրթական հնարավորություն է առաջարկում երիտասարդներին, Արևելյան գործընկերության երկրներից՝ Հայաստանից, Ադրբեջանից, Բելառուսից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից: Ծրագիրը նպատակաուղղված է նաև աջակցել այս երկրներից ուսանողների միջև միջտարածաշրջանային փոխանակմանը:



Ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրոպագիտության ուսուցմամբ միջազգային բակալավրիատի դիպլոմի ծրագիրը:

Ծրագիրը առաջարկում է միջազգային բակալավրիատի դիպլոմի կոմպլեքսային և ինտենսիվ երկամյա ուսումնական դասընթացներ, Եվրոպայի և Եվրոպական հարցերի մասնագիտացված հետազոտություններում ներգրավվելու բացառիկ հնարավորությունների հետ միասին: Եվրոպական դպրոցների գլխավոր քարտուղարության ղեկավարությամբ և աջակցությամբ՝ հումանիտար գիտությունների, լեզվի և գրականության, արվեստի և պատմության դասընթացները համապատասխանեցվել են Եվրոպական բակալավրիատի (EB) ուսուցմանը և ներդաշնակորեն համակցվել հստակ Եվրոպական հեռանկարների հետ: Ուսուցման, էսսեների և ուսուցողական ակտիվությունների իրականացման գործընթացում աշակերտները լրացուցիչ հնարավորություն կունենան քննարկելու Եվրոպական թեմաները և հարցերը:



Ի՞նչ է Միջազգային բակալավրիատի ծրագիրը:

Միջազգային բակալավրիատը (IB) միջազգային հիմնադրամ է՝ խանդավառված կրթության միջոցով բարեկեցիկ աշխարհ ստեղծելու գաղափարով: IB-ն առաջարկում է կրթություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշակերտների էթիկական պահվածքի, տրամաբանական, քննադատական և անկախ մտածելակերպի ձևավորման վրա: IB-ն իր ուսանողներին ամբողջ աշխարհում առաջարկում է նաև միջազգային և բազմամշակութային կրթական միջավայր, պատրաստում նրանց մեր գլոբալիզացված աշխարհի մարտահրավերներին: Այդ տեսանկյունից, Միջազգային բակալավրիատի կրթական փիլիսոփայությունը համապատասխանեցված է Եվրոպական բակալավրիատի ծրագրի սկզբունքներին և նպատակներին:



Շնորհվելու է թե՛ ո՞չ միջազգային բակալավրիատի ծրագրի դիպլոմ ունեցող ուսանողներին առավելություններ աշխարհի տարբեր համալսարաններում:

Միջազգային բակալավրիատի դիպլոմը ճանաչված է 2 000 համալսարանների կողմից 75 երկրում: Այս ցանկը հասանելի է կազմակերպության կայք էջի որոնման դաշտում (www.ibo.org): IB-ն նաև պահում է համալսարանների ցանկը, որը առաջարկում է կրթաթոշակներ միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագրի շրջանավարտներին՝ յուրաքանչյուր կրթական հաստատության կողմից նշված պայմաններով: Կրթաթոշակային ծրագրի ավարտից հետո ուսանողները կարող են նաև դիպլոմները ներկայացնել իրենց երկրների պետական մարմիններում պաշտոնական համարժեք ստանալու համար:



Ո՞վ է իրականացնում միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագիրը:

Միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագիրը իրականացնում է «Նոր դպրոց»-ը Թբիլիսիում, (Վրաստան), արտոնագրված 2010 թվականից: «Նոր դպրոց»-ը իր ներդրումն ունի Վրաստանում բազմալեզու և բազմամշակութային ուսուցման մեջ և բազմաթիվ տեղացի ու օտարերկրացի շրջանավարտի հաջող ուսուցման և կարիերայում ևս: Վերջերս, «Նոր դպրոց»-ը նաև կարևոր հաջողություն է գրանցել՝ հանձնելով իր առաջին միջազգային բակալավրիատի դիպլոմը եվրոպագիտության մասնագիտացմամբ, և այժմ ավելի շատ է պատրաստված տարածաշրջանից Նոր հոսքի ուսանողների հետ սեփական կրթական փորձը կիսելու համար:



Ի՞նչ արտադասարանական ակտիվություններ են նախատեսված «Նոր դպրոց»-ում:

Արտադասարանական ակտիվությունները սահմանում են ուսանողների փորձի եվրոպական ուղղվածությունը «Նոր դպրոց»-ում և հնարավորություն են տալիս նրանց ներկա գտնվելու եվրամիության գիտնականների և բարձր աստիճանի պաշտոնատար անձանց կողմից եվրոպական հարցերի շուրջ կազմակերպվող կոնֆերանսներին և միջոցառումներին: Բացի այդ, նախատեսված են այցեր ԵՄ հաստատություններ, որոնք կամրապնդեն ուսանողների գիտելիքները եվրոպայի և նրա բնակչության մասին: Այս երկամյա ծրագրի ընթացքում ուսանողները կմասնակցեն նաև տարբեր ակտիվությունների, այդ թվում՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, լող, շախմատ, ՄԱԿ մոդելավորում, դրամայի և խոհարարական ակումբ: Յուրաքանչյուր կիսամյակ ուսանողները հնարավորություն կունենան Վրաստանի տարբեր մարզերով ճանապարհորդության, որն իրոք հարստացնում է կրթաթոշակառու ուսանողների փորձը:



Ապահովում է թե ոչ կրթաթոշակային ծրագիրը հավասար հնարավորություններ թեկնածուների համար:

Կրթաթոշակային ծրագրի նպատակն է արդար գեղարային հավասարակշռություն և հավասարակշռված աշխարհագրական բաշխում ապահովել՝ ընդունված հայտերի հիման վրա: Դա հաջողությամբ իրականացվեց առաջին խմբի հետ՝ կազմված ուսանողներից Արևելյան գործընկերության վեց երկրից: Նաև տեղահանված անձի կամ փախստականի կարգավիճակ ունեցող և Արևելյան գործընկերության երկրներից մեկի քաղաքացի հանդիսացող ուսանողներին հրավիրում ենք հայտ ներկայացնելու:



Որտե՞ղ կբնակվեն ուսանողները դպրոցական տար (ինների)վա ընթացքում:

Ուսանողները կբնակվեն «Նոր դպրոց»-ի տարածքում գործող հանրակացարանում: Նոր հանրակացարանները ապահովում են ուսանողների և դպրոցի անձնակազմի հարմարավետությունը: Հանրակացարանի ընդհանուր օգտագործման վայրերը ուսուցման և սոցիալական հավաքների համար ապահովելու են ուսանողների միջև գիտելիքների և փորձի կիսման հրաշալի հնարավորություն: Ուսանողներին վերահսկելու են հանրակացարանի ղեկավարը և մենթորական թիմը, ովքեր և ապահովելու են նրանց հանգիստը, անվտանգությունը և ընդհանուր բարեկեցությունը:



Ինչպիսի՞ կենսապայմաններ են հանրակացարանում:

Հանրակացարանում երկու ուսանող բնակվում է անհրաժեշտ տեխնիկայով հագեցած սենյակում, օպտիմալ ուսուցման մթնոլորտ ապահովելու համար: Հարկ է նշել, որ «Նոր դպրոց»-ում սնունդը պատրաստվում է բարձր որակի չափանիշներով, այն միշտ թարմ է ու առողջ՝ ապիովելով բազմազանություն և սննդական սահմանափակումներ ունեցող ուսանողների համար:



Տարին քանի՞ անգամ կարող են ուսանողները մեկնել տուն:

Ուսանողներին հնարավորություն է տրվում իր երկիր մեկնել տարին չորս անգամ (ձմեռային, աշնանային, ամառային և գարնանային արձակուրդներին): Ճանապարհածախսը ներառված է կրթաթոշակում:



Կլինե՞ն թե ոչ ուսանողները ապահովված ուսուճաական նյութերով:

Ուսումնական նյութերը, ծրագրի համար անհրաժեշտ կոնկրետ սարքի հետ (օրինակ՝ TI հաշվիչ) միասին նախատեսված են կրթաթոշակով: Բացի այդ, կրթաթոշակառու ուսանողները անհատական ապահովված կլինեն անձնական համակարգչով դասարանում օգտագործելու և տնային աշխատանքները կատարելու համար, ինչպես նաև բջջային հեռախոսով հանրակացարանի հավելվածի մատչելիության համար:



Ի՞նչ է ընդգրկում բժշկական ապահովագրությունը:

Ուսանողները կունենան բժշկական ապահովագրություն, որը ամբողջովին մարում է հիմնական բժշկական ծախսերը՝ ներառյալ ատամնաբուժական միջամտությունները: Բժշկական ծառայությունների/ծախսերի ցանկը թարմացվում է ամեն տարի:



Ի՞նչ ծախսեր պետք է մարվեն ուսանողների կողմից:

Ապրուստի հիմնական ծախսերը մածամասամվ նախատեսված է կրթաթոշակով, այսպիսով ուսանողների հաշվին թողնելով անհրաժեշտ հագուստի և իրենց լրացուցիչ ակտիվությունների ծախսերը, որոնք և կրթաթոշակով նախատեսված չեն:



Ինչպիսի՞ հագուստի սահմանափակումներ են գործում դպրոցում:

Դպրոցում չկա ձևական համազգեստ, սակայն ուսանողները պետք է կրեն սպիտակ վերնաշապիկներ և մուգ գույնի տաբատ կամ զգեստ:



Ի՞նչ անձնական փաստաթղթեր է հարկավոր ուսանողներին:

Հայտերը ներկայացնելու ընթացքում, ուսանողները պետք է ներկայացնեն Ճնողի համաձայնության ձևաթուղթը, ծննդյան վկայականը և նախորդ ուսումնական տար(իներ)վա գերազանցության գնահատականները անգլերենով կամ անգլերեն թարգմանված և նոտարական կարգով հաստատված, եթե փաստաթղթերի բնօրինակը անգլերեն լեզվով չէ: Կրթաթոշակի արժանացած ուսանողները պետք է ունենան անձնագրեր, ծննդյան վկայականներ և գնահատականների թերթիկ:



Անվճար է թե ոչ Թբիլիսիում ուսանողների համար երթևեկությունը:

Հանրային տրանսպորտից օգտվելը, այդ թվում ավտոբուսներից և մետրոյից Թբիլիսիի սահմաններում անվճար է կրթաթոշակառու ուսանողների համար:



Խնդրում ենք այցելել www.eapeuropeanschool.eu կայք էջ, հայտերը ընդունելու մասին հայտարարության մեկնարկի մասին ամբողջ լրատվությունը որոնելու և օնլայն հայտերի գործընթացը ավարտելու համար:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար խնդրում ենք այցելել eusolarship@eapeuropeanschool.eu կամ զանգահարել՝

+ 995 32 225 70 06 (ֆիքսված հեռախոսահամար)
+ 995 599 25 17 17 (բջջային)



Supported by the European Union

